

խատում էր իւր ճերմակ ալիքը թուխ դարձնել. մի զգուշի ախտ նորան արագ քայլերով դէպի գերեզման էր տանում և նորան տանջում էր մանաւանդ այն միտքը, թէ մահից յետոյ ոչ ոք չպէտք է ցաւի նորա վերայ: Թէև անկողնի միջից նա կարողացաւ Նրուսաղէմում ծագած մի ապրտամբութիւն ճնշել և պարագլուխներին կենդանւոյն այրել տալ, բայց այդ նորան գոհացնել չէր կարող: Ըստ Յովսէպոսի, նա հրամայել էր Նրուսաղէմի բոլոր պատուաւոր քաղաքացիներին մի տեղ ժողովել, որպէս զի իւր շունչը փչելուն պէս նոցա զնգահաճար անեն և այդպէս իւր մահը առանց ողբերի չմնայ: Բայց վճռական ընդհանրութեամբ, նա դանակ առաւ մի անգամ ինձոր կճպելու և երբ կամենում էր նորանով վերջ դնել իւր դառն կեանքին, փեսան ճշալով վրայ ընկաւ և խլեց. ճիշդ լսելի եղաւ պալատում և ամէնքը կարծեցին, թէ թագաւորը մեռել է. իմացաւ այդ նաև Անտիպատրոս բանտում և ազատ շնչեց. իսկոյն նորա ուրախանալու լուրը Հերովդէսին հասցրին, որ մարդիկ ուղարկեց՝ նորան տեղն ու տեղը սպանելու և թաղելու: Ապա նա իւր թագաւորութիւնը բաժանեց երեք որդիների մէջ, որոնցից Արքեղայոս թագաւոր անունը պէտք է կրէր և մեռաւ հինգ օրից յետոյ: Որդիքը նորան շատ մեծ հանդիսով թաղեցին: Պատմութիւնը նորան Մեծ անունը տուաւ, տարբերելու համար իւր ընչին որդի Հերովդէս Անտիպատրոսի հետ: Բայց այդ Մեծ Հերովդէսի անունը հազիւ թէ յիշողներ գտնուէին, եթէ նորա զարհուրելի գործերի յիշատակը չարձանագրէր ընդ միշտ իւր մէջ Բեթզեհէմի մանկանց կոտորածի պատմութիւնը, եթէ նոյն այն ժամանակ, երբ շքեղ պալատում տանջուում էր նա մահուան տաղնապով և կասկածներով, նորա տէրութեան մի խուլ անկիւնում մի նոր թագաւոր ծնուած չլինէր: Իսրայէլի իսկական թագաւորը և կատարեալ հակառակն այդ ողորմելի բռնաւորի: Հերովդէս մեռել է այժմեան քրիստոնէական թուականից 4 տարի առաջ, օրից հետեւում է, թէ մեր ներկայ հաշիւը սխալ է. Բրիստոս ևս 4 տարի տաւելի առաջ պէտք է ծնուած լինի, քան մենք հաշուում ենք:

ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ.

Քննական կրօնագիտութիւն, հանդերձ ապացուցութեամբ կրօնից. — Տէր Սահակ քահանայի Տէր Սարգսեան: Բ. տպ. Կ. Պոլիս. 1897: — Այս գրքի առաջին տպագրութիւնը լոյս է տեսել 1874 թ.-ին և այդ օրուանից ի վեր առանձնաշատուկ, աչքի ընկնող տեղ է բռնում մեր եկեղեցական զրահանութեան մէջ: 23 երկար տարիների ընթացքում նա ուղեցոյց է եղել բազմաթիւ կրօնասոյցների այն նաև կրօնի դասագրքերը զրոյնների համար, բայց լոյս չէ տեսել ոչ մի «կրօնագիտութիւն», որ իւր ճոխութեամբ և ինքնուրոյնութեամբ գտնէ ի մօտոյ հաւասարուէր նորան, այնպէս որ նա այժմ ևս առաջինն է իւր տեսակի մէջ, ուրեմն և նորա Բ. տպագրութեամբ լոյս տեսնելն առանձին ուշադրութեան արժանի մի երևոյթ: Գրքի արժանայարգ հեղինակը ապրում է դեռ «բարեք» ծերութեամբ և ինչպէս երևում է, մինչև վերջն անընդհատ աշխատել է իւր գրութեան վերայ, սրբագրութիւններ ու յաւելումներ անելով և ահա յառաջ է եկել 1038 էջ ունեցող մի խոշոր գիրք, մինչ Ա. տպ.-ը միայն 23 + 579 էջ ունէր: Այս փոփոխութիւնը չի վերաբերում գրութեան ընդհանուր ուղղութեանն ու նիւթի դասաւորութեանը. զլուսների բաժանումը նոյնն է մնացել, միայն ներածութեան մի մասը աւելի ընդարձակ ձևով փոխադրած է «Բ. գրքի» մէջ և կազմում է այստեղ «Ա. մասի» 2. և 3. յօդուածները. իսկ Բ. մասի Ա. գլխի Բ. յօդուածի վերջը աւելացրած է մի Դ. հատուած՝ «Եպատակք և արդիւնք տնօրինութեանց Փրկչին», որ բռնում է 365—386 էջ:

Քանի որ խօսքը նիւթի դասաւորութեան մասին է՝ նկատենք, որ այս կէտը գրութեան ամենաթոյլ կողմերից մէկն է: Թէ ինչ սկզբունքի ներքոյ կրօնի ամբողջ առարկան չորս գրքերի է բաժանած. — Ա. Աստուծոյ էութիւնը և անոր գործոց վերաբերեալ վարդապետութիւնները. Բ. Աստուծոյ առ մարդ Յայտնութիւնը. Գ. Եկեղեցին և անոր խորհուրդները և Դ. Եւրոպական կենաց վարդապետութիւնը. ինչպէս են կարելի դառ-

նում օր. այսպիսի ստորաբաժանումներ, «Հատուած Բ. Մարդեղութիւն Աստուածորդւոյն» — Պրակ Ա. Խորհուրդ մարդեղութեան. Պրակ Բ. Պաշտօն Որդւոյն Աստուծոյ. Պրակ Գ. Որդւոյ Աստուծոյ Բրիստոս անուանիր. — Բաժանում Ա. Բրիստոս մարգարէ. Բաժանում Բ. Բրիստոս քահանայ. Բաժանում Գ. Բրիստոս թագաւոր: — Հատուած Գ. Տնօրինութիւնք Երեսուի Բրիստոսի. — Պրակ Ա. Անկախութիւնք զաւտեան Մեսիային. Պրակ Բ. Ծնունդ Նորա և կեանք երկրաւոր. Պրակ Գ. Հաւատարմք Հրաշից Երեսուի Բրիստոսի և Աւետարանապատում սքանչելեաց. Պրակ Դ. Մոլորութիւնք ընդդէմ Մարդեղութեան Որդւոյ Աստուծոյ և ինչ՝ հասկանալի չէ մեզ: Եթէ «Երօնագիրութիւնը գործնական գիտութիւն մ'է՛, որ կուսուցանէ Աստուածաբանութիւն. այսինքն է՝ Հաւատալ Աստուծոյ, յուսալ ի Նա, և սիրել՝ պաշտել զԱյն» ինչպէս հեղինակն ասում է իւր գրքի սկզբում*, պէտք է զբաղուի ուրեմն այնպիսի խնդիրներով, որոնք կամ հաւատոյ կամ յուսոյ և կամ սիրոյ առարկայ են, և կարող է ըստ այդմ երեք մասերի բաժանուել ինչպէս և սովորաբար բաժանում են. թէպէտ չկայ այնպիսի յուսոյ առարկայ որ հաւատոյ առարկայ չլինի, ուստի և իրօք կրօնագիտութիւնը երկու գլխաւոր մաս ունի միայն՝ մին հաւատով ընդունած դասական ճշմարտութիւններին և միւսը սիրոյ պահանջած բարոյական սկզբունքներին վերաբերել: Այդ սահմաններից դուրս շատ կարեւոր գիտելիքներ կան, որոնք կրօնի դասաւանդութեան նիւթ պէտք է կազմեն, բայց «Հաւատալ, յուսալ և սիրել» սովորեցնող կրօնագիտութեան մէջ չեն մտնում. գոնէ առ առաւելն՝ կարեւոր դէպքերում կարող են ծանօթութեան մէջ միայն յառաջ բերուիլ և ոչ գրեւաճքի ամբողջ մի մասը կազմել ինչպէս օր. այստեղ «Եայտնութեան» գիրքը, որ բովանդակում է հեղինակի երկար ու բա-

րակ խիստ անյաջող տեսութիւնները սուրբ Գրքի արժանեաց ու կազմութեան և Աւանդութեան մասին: — Իսկ թէ ինչո՞ւ «Անկախութիւնք զաւտեան Մեսիային» կամ «Մոլորութիւնք ընդդէմ Մարդեղութեան» Բրիստոսի տնօրէնութիւնների հաշուում են, կամ ինչո՞ւ պակաս սերտ կապ ունին «Մարդեղութեան» հետ, քան Որդւոյն Աստուծոյ պաշտօնը: Բրիստոս անուանիր, Մարգարէութիւնը, Բահանայութիւնը և ինչ, աւելի դժուար է մեզ որոշել:

Առհասարակ պէտք է ասած, որ Հայր Տէր Սարգսեան խիստ ընդարձակ և բազմակողմանի հմտութիւն է ցոյց տալիս իւր շօշափած խնդիրների նկատմամբ. նա ոչ միայն ազատ կերպով և ամենայն առատութեամբ գործ է գնում ս. Գիրքը, ոչ միայն նախնի հայրերից բազմաթիւ վկայութիւններ է բերում, այլ և օգտուում է եւրոպական զանազան ազգերի պատկանող (հարկաւ աւելի հրապարակի վերայ յայտնի քան բուն աստուածաբանական գիտութեան ներկայացուցիչ) հեղինակներից, և այս հմտութիւնը, այսչափ կարգացած լինելը, մեր կեանքի պայմաններում շատ զարմանալի պէտք է երևայ ի՞նչ յիշատակի բոլոր նիւթը նա ինքն է ժողովել և ոչ մատչելի ժողովածուներից առել, որոնց մասին չէ յիշում: Եւ ամենայն դէպս իւր ընդարձակ հմտութիւնը և իւր ժողոված տեղեկութիւնները մի որոշ սկզբունքի կամ մի որոշ սխալումի չեն թարկելով, նա ըստ մեծի մասին նպատակի յարմար գործ չէ գնում: Կամ գուցէ աւելի ուղիղ էր ասել՝ նա առաջնորդուում է մի սկզբունքով, բայց այդ սկզբունքը սխալ է, և դորանից յառաջ է զալիս նորա գործի երկրորդ ամենախոշոր թերութիւնը: Սա ապացուցանել է կամենում ապացուցանել ամեն ինչ՝ նաև այնպիսի բաներ, որոնք լոկ հաւատոյ խնդիր են և պէտք է լինին. ապացուցանել արամաբանական և բնագիտական օրէնքներով արդի գիտութեան ընծայած փաստերով, և այսպէս յաճախ մի խախտում հիման վերայ անմեղ ողբերութեամբ ահադին շէնքեր է կառուցանում առանց կասկածելու, որ ճշգրիտ գիտութեան մի շունչը բաւական է նոցա

* Սխալ որոշումն ի հարկէ: Կրօնագիտութիւնը գոյեմական գիտութիւն չէ, այլ ծեսական, որ ոչ քի հաւատար յուսալ և սիրել և սովորեցնում (գիտութիւնն այդ անկ չէ կարող), այլ սովորեցնում է քի ինչն է մեր հաւատոյ, յուսոյ և սիրոյ առարկան:

փյոյններու համար: Թողնենք Աստուծոյ գոյութեան համար բերած ապացոյցները: որոնք շատ անգամ քննութեան առնուած են և որոնց անհիմն ու անտեղի լինելը մի անգամ ընդ միշտ ցոյց են տուել Կանտ և իւր հետեւողները: * բաւական է միայն այն օրինակներից մէկը յիշել, որով նա ապացուցանուած է, թէ մարդու մէջ մարմնից զատ, նորանից անկախ և անմահ հոգի կայ: «Եթէ նիւթն ըլլար ի մարդն խորհո՞ղ՝ դատողը, որչափ հրակայական մեծութիւն ունենար ոք հասակաւ, կամ գէր ըլլար մարմնով, այնքան շատ և քաջ պիտի խորհէր ու գտար: ... այլ մարդիկ ալ շատ երջանիկ պիտի համարէին զանձինս, սաեպ տեսնելով որ իրենց կանայք զարմանալի կերպով խելք կը ծարտարեն: երբ յղութեան վիճակը կը մանեն: Այսպիսի անձաշակ սրամտութիւններ ոչ մի գիտնականի կամ անաստուածի չեն զարմացնի ի հարկէ: **», այլ կը նպաստեն միայն քրիստոնէական կրօնի անհերքելի և սրբազան ճշմարտութիւնները կասկածելի և ծաղրելի կացուցանելու:

Մենք կարող էինք ուրիշ շատ այսպիսի օրինակներ բերել, որոնք արդիւնք են անպտուղ եռանդի, ոչ հաւատացողի համար օգուտ ունեն և ոչ անհաւատի այլ միայն, քրիստոնէութեան հիմնական ճշմարտութիւնները՝ իսկական լոյսը թողած, վազել են տալիս շրջմոլիկ ծրագրերի ետեւից, որով շատ անգամ հեղինակի ուղիղ և օգտակար գատողութիւնների արժէքն ևս կորչում է: Աւելորդ և փաստակար եռանդ է օրինակ աշխատել ցոյց տալ, որ Նոր Կտակարանի տուած զազափարը ս. Երրորդութեան և այլ նման աստուածային խորհուրդների մասին նոր չէ իսկա-

պէս, այլ իւր ապացոյցներն ու նմանութիւններն ունի ոչ միայն Հին Կտակարանի այլ և հեթանոսական կրօնների մէջ. իրրեւ թէ «Չանդիկ աղանդոյն Զրուան Ախարանն (յորմէ) Արամազդն (Ռամիզդն) և Պարամանն (Արհմն)» (չմը Աստուած) կամ «Հայոց Արամազդը, Անահիտն (կին Աստուած) ու Վահագնը» շատ նման լինէին քրիստոնէի ճանաչած Երրորդութեան, կամ քրիստոնէի պարճանքն այն չլինէր իսկ, որ նորան եղած յայտնութիւնը նոր ինչ է, ի սկզբանէ աշխարհի ծածուկ մնացած, և նոյն իսկ այժմ ըմբռնելի չէ սովորական՝ ի Հոգւոյ չծնուած, մարդուն: Այս սխալ եռանդի արդիւնքն է նաեւ, որ մինչդեռ երկրորդական, շատ անգամ հաւատի հետ կապ չունեցող խնդիրների երկար բացատրութիւններ են նուիրուած՝ մի քանի խօսք բաւական է համարուում օր. քրիստոնէական կրօնի կամ առաքելական քարոզութեան մէջ այնպիսի կեդրոնական անդրոնող մի զազափար բացատրելու համար, որպիսին արտայայտում է Աստուծոյ Հայր անունը. այն ևս բոլորովին անբաւարար և թիւր բացատրութիւն՝ իրր այդ անունն զլիաւ որ նշանակութիւնն այն է մեզ համար, որ Նա «մեր Հայրն է արարչութեամբ և ինչ: Այսպէս և, փոխանակ Բրիստոսի մարդկոյութեան կամ խաչի մահուան նշանակութիւնը մեր փրկութեան համար ինչպէս հարկն է բացատրելու, դուր աշխատանք է դորձ դրած, որչափ կարելի է շատ օրինակներով, մեծիական բոլոր տնօրէնութիւններն իրրեւ Հին Կտակարանի մէջ նախադրուած ցոյց տալ: Նոր Կտակարանում յիշուող մարդարեւութիւնների հետ բերուած են տյտեղ բազմութիւ պատահական խօսքեր Հին Կտակարանից և ցոյց տրուած իրրեւ Բրիստոսի վերայ կատարուող զուշակութիւններ:

Սակայն այս բոլոր մանրամասնութեանց վերայ կանգ առնելը մեզ շատ հեռու կը տանէր, կասենք միայն, որ այսպիսի վկայութիւններ և ապացոյցներ, եթէ բոլորեքեան հիմնաւոր և ուղիղ իսկ լինէին՝ նոցա կուտակուէր յամենայն դէպս աւելորդ է և միջնադարեան անտեղութիւն. ինչ որ ճշմարտութիւն է, մի քանի ակներեւ և ստոյգ փաս-

* Հայր Տէր Սարգսեան տնկեալն լռելութեամբ աշխատում է ի միջի այլոց ցոյց տալ, որ Աստուծոյ հաւատայ պէտք է, որովհետեւ շահաւոր է, երբ ուղիղ չկայ հաւատացողը ոչինչ ի կարգնում, միևնոյն տնկաւոր շատ քան է կարգնում, երբ ուղիղ լինի:

** Նոյն նոյնական գործողութիւններ կապում են քննդրում ուղիղի կամ մեղադրանքի համակարգութեան հետ, որի զարգացում կամ անզարգացած լինելը ոչ ոք չէ մտածել մարմնի մեծութիւնից կախում համարել: Մեր եկեղեցական աղաբաւ ուղիղն ևս յիշում է, բայց կրկնելով նոյն անգոր առաւելութիւններ:

տերով աւելի դիւրաւ կը պարզուի: քան բազմաթիւ մութ և երկդիմի փաստարանութիւններով:

Դժբաղդարար մեր հեղինակի ոչ միայն ապացուցութեան եղանակն ու հանած եզրակացութիւններն են շատ անգամ սխալ այլ և զանազան տեղերից ժողոված տեղեկութիւնները, այդպիսի սխալ տեղեկութիւններ և անհիմն եզրակացութիւններ շատ են մանաւանդ վերև յիշած «Յայտնութիւն» վերնագիրը կրող մասի մէջ, որ ամբողջապէս կարող էր պակասել առանց զրուածքի լրութեանը փնտսելու: և որի մէջ մօտ 100 էջ դործ է դրած ապացուցանելու համար թէ ս. Գրքի բոլոր հնախօսական, պատմական, բնագիտական տեղեկութիւնները ճշմարիտ են: Թէ նորա մէջ ոչ մի սխալ տող չկայ: մինչդեռ այդպիսի ձեռնարկութեան անխորհուրդ լինելը տեսնելու համար բաւական է հարցնել միայն՝ որն է այդ ս. Գիրքը. հայերէն, յունարէն, լատիներէն թարգմանութիւնը, թէ երբայեցեբէն բնագիրը. չէ՞ որ սոցանից իւրաքանչիւրը միւսներից աչքի ընկնող տարբերութիւններ է ներկայացնում: Յայտնի իրողութիւնների առջ աչք փակելը կամ տառը պաշտպանելու համար հոգւոյ հեղինակութիւնը ձգելն ի՞նչ օգուտ կը բերէ քրիստոնէութեան. ս. Գիրքը ճշմարիտ յայտնութեան յիշատակարան է և ոչ հնախօսական կամ բնագիտական տեղեկութիւնների ժողովածու: ուստի և նորա կրօնական արժէքն ու նշանակութիւնը ամենեւին չեն ընկնի, եթէ այս կամ այն կրօնի հետ կապ չունեցող տեղեկութեան սխալ կամ թերի լինելն երևայ: ս. Հոգին այս աստուածաշունչ մատենաների հեղինակներին հողի է ներշնչել, և ոչ բառեր կամ բնական զիտելիքներ, որոնք ժամանակի և պարագաների ազդեցութեան են ենթարկուում և ըստ այդմ փոփոխուիլ և եղծանիլ կարող են: մինչդեռ անփոփոխելի և անեղծանելի է հոգին միայն:

Սակայն այս բոլորի հետ մի կերպ հաշտուել կարելի է. մեզ մնում է յիշել մի կէտ: որի հետ ոչ մի կերպ հաշտուել չենք կարող և ստիպուած ենք կրկին ու կրկին անգամ հարցնել. մինչև երբ պէտք է տեւ այս

ամօթալի թիւրիմացութիւնը մինչև երբ մեր ոչ միայն ազէտ կրօնուսոյցները, այլ նաև ըստ ամենայնի Հայոց Առաքելական եկեղեցւոյ ուղղափառ դաւանութեան համաձայն՝ կրօնագիտութիւն զրոյները պէտք է սնդեն: Թէ մենք «ի մի և նոյն անձին Բրիստոսի երկու բնութիւնք» երկու կամք կը խոստովանեմք: հաւատացնելով մի և նոյն ժամանակ, որ մեր հայրերն է՛լ տասնեակ դարեր իրենց դաւանութիւնը պաշտպանելու համար կոխ վարելիս նոյն կերպ են խոստովանել և չեն իմացել, որ իրենց ու հարեան եկեղեցիների դաւանութեան մէջ եղած խտրութիւնը սխալ հասկացուած բառերի խտրութիւն է միայն: Հայր Տէր Սարգսեան այս գէպքում ևս ուր խօսքը իւր եկեղեցւոյ հակառակ մի վարդապետութիւն պաշտպանելու մասին է, զարմանալի եռանդ է ցոյց տալիս և բերում է փաստեր, որոնք իւր կարծածից բոլորովին տարբեր բան են ապացուցանում: Մենք այս խնդրի վերայ ուրիշ առթիւ երկարօրէն զրած լինելով՝ բաւական ենք համարում այստեղ միայն վրստահացնել կրկին, որ քրիստոնեայ եկեղեցւոյ զրեթէ մեծագոյն մասը երկար ժամանակ մեր հայրերի հետ մէկտեղ մի բնութիւն՝ ուրեմն և մի կամք, է դաւանել, առանց Նւաթիքական կամ ուրիշ որևէ մոլորութեան մէջ ընկնելու: առանց հետեցնելու թէ ուրեմն Բրիստոս մարդկային քնական հոգի չունէր, այլ հեռեող ճանաչելով իրեն միայն Նփեսոսի Գ. Տիեզ. Ժողովի սահմանած և այդ ժողովի պարագլուխ ս. Կիւրեղ Աղեքսանդրացու քարոզած ուղիղ վարդապետութեան:

Չմոռանա՛նք սակայն նաև այն գովելի կողմը յիշել, որ Հայր Տէր Սարգսեան օտար դաւանութեանց մասին խօսելիս խիստ պաշտած լեզու է զործածում և շատ ուղիղ խորհրդածութիւններ է անում օր. Հռովմէական եկեղեցւոյ ոսնձգութեանց մասին: Առհասարակ նորա զրբից, չնայած բոլոր թերութիւններին, շատ բան կարելի է սովորել:

Կ. Վ.